ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 480 - Ա

23 սեպտեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 52-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման պլանը՝ համաձայն N 1 - N 8 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման պլանը հաստատելու մասին» N 52-Ա որոշումը:

23.09.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Քաղաք

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2021 թվականի սեպտեմբերի 23 ի
N 480-Ա որոշման

I. Ընդհանուր դրույթներ

1. Գեղարքունիքի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանը մարզի տարածքում տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի իրականացման կարգը կանոնակարգող փաստաթղթերի փաթեթ է՝ զենքի տեսակների կիրառման կամ դրանց անմիջական սպառնալիքի, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում տարահանված բնակչության կենսագործունեությունն ապահովելու նպատակով:

2. Սույն պլանում օգտագործված հիմնական հասկացությունները

1) **Բնակչության կենսաապահովում**՝ բնակչության կենսագործունեության համար նրա ֆիզիոլոգիական, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծում և պահպանում:

2) **Բնակչության կենսաապահովման համակարգ**՝ արտակարգ իրավիճակում մարդու կյանքի և առողջության պաշտպանության և պահպանության համար անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծման նպատակով կառավարման մարմիններից, ծառայություններից և բնակչության կենսաապահովման միջոցներից կազմված համակարգ:

3) **Բնակչության կենսաապահովման** ենթահամակարգ՝ արտակարգ իրավիճակում բնակչության կենսաապահովման համակարգի մաս՝ որոշակի կենսաապահովման տարատեսակ իրականացնող (օրինակ՝ ջրամատակարարման, կոմունալ-կենցաղային, մթերային մատակարարման ենթահամակարգեր և այլն) ենթահամակարգ:

4) **Խմելու-տնտեսական ջրով ապահովում**՝ բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերին ջրով ապահովման համար ջրի արդյունահանում, մաքրում և վարակազերծում, պահպանում, պաշարների լրացում, տեղափոխում ու բաշխում:

5) **Սննդամթերքով ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերին սննդամթերքով ապահովման համար դրանց արտադրություն, պահպանում, տեղափոխում ու բաշխում:

6) **Առաջին անհրաժեշտության առարկաներով ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերին ամենօրյա արդյունաբերական ապրանքներով (օրինակ՝ հագուստ, կոշիկ, անկողնային պարագաներ, տնտեսական ապրանքներ և ճաշասենյակային սպասք և այլն) ապահովման համար դրանց արտադրություն, պահպանում, տեղափոխում ու բաշխում:

7) **Կացարանով ապահովում՝** տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին կացարաններով ապահովման համար աղետի գոտում պահպանված բնակելի տարածքների օգտագործում, ինչպես նաև տարահանման տարածքներում ժամանակավոր կացարանների փոխադրում, ծավալում և կառուցում:

8) **Կոմունալ-կենցաղային ծառայություններով ապահովում՝** տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին ջեռուցման (տաքության), լուսավորության, տարածքների սանիտարական մաքրման, բաղնիքալվացքարանային, հուղարկավորության և այլ անհրաժեշտ ծառայությունների ապահովում:

9) **Բժշկական օգնության և սպասարկման ու սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում՝** տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին առաջին բուժօգնության (որակավորված և մասնագիտացված) հետագա տարահանմամբ (ըստ ցուցումների) բուժական կազմակերպություններ ստացիոնար բուժման համար, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

10) **Տրանսպորտային ապահովում՝** վտանգավոր (աղետի) գոտուց տուժած բնակչության տարահանման (տեղափոխման), ինչպես նաև կենսաապահովման բոլոր տեսակների նյութական ռեսուրսների մատակարարման խնդիրների լուծման համար միջոցառումների իրականացում:

11) **Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվական ապահովում՝** Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության և այլ կառավարման մարմինների կողմից տեղեկատվության հավաքագրման, պահպանման, թարմացման և յուրաժամանակ փոխանցման, ինչպես նաև բնակչությանն արտակարգ իրավիճակների ծագման հավանականության (փաստի), դրա հնարավոր հետևանքների, աղետի գոտում, երթուղիներում և տարահանման տարածքներում վարքի կանոնների մասին գործընթացները:

12) **Բնակչության կենսաապահովման համակարգի ուժեր՝** արտակարգ իրավիճակներում բնակչության կենսաապահովման խնդիրների լուծումը ժամանակավոր կամ մշտական իրականացնող միավորումներ և կազմավորումներ.

13) **Տարահանված և տեղաբաշխված բնակչություն՝** վտանգավոր տարածքից անվտանգ տարածք ժամանակավոր տեղափոխված ու տեղաբաշխված մարդիկ:

14) **Բնակչության կենսաապահովման տարածքային համակարգերի արտադրական հնարավորություններ՝** ռեսուրսների քանակը (ծառայությունների ծավալը), որոնք կարող են տրամադրվել տարահանված բնակչության տեղաբաշխման տարածքներում նրանց կարիքների բավարարման համար՝ կենսաապահովման ժամանակահատվածի ամբողջ ընթացքում:

3. Սույն պլանում ներգրավված են հետևյալ մարմինները՝

1) Գեղարքունիքի մարզպետարանը՝ կազմակերպում և ղեկավարում է տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի իրականացումը մարզի տարածքում: Մասնակցում է հանրապետական պլանով նախատեսված տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի միջոցառումների իրականացմանը, հանձնարարականներ է տալիս միջոցառումների նախապատրաստման վերաբերյալ, իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2) Մարզի համայնքները՝ իրենց համայնքում կազմակերպում և իրականացնում են տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովումը: Գնահատում են համայնքի կենսաապահովման համակարգի արտադրական հնարավորությունները: Կազմակերպում են համայնքի տարածքում տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանավորումը: Իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

3) Մարզի կազմակերպությունները՝ կազմակերպում և իրականացնում են իրենց տարահանված աշխատողների տեղաբախման տեղամասերում կենսաապահովումը: Կազմակերպում են իրենց կազմակերպության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանավորումը: Իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4) Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ Վարչություն) համակարգում է մարզպետարանի կողմից տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման պլանավորման գործընթացները: Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4. Սույն պլանի իրավական հիմքերն են «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Պետական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 24.06.2010թ. «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N824-Ն որոշումը և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր:

II. Տարահանված բնակչության կենսաապահովման համակարգերի արտադրական հնարավորությունների գնահատումը

1. Համաճարակային , սեյսմիկ, սողանքային, ջրհեղեղային, հրդեհային և այլ արտակարգ իրավիճակների տեսանկյունից հնարավոր իրավիճակներ

Մարզի տարածքում համաճարակային հիվանդություններ կարող են առաջանալ օդակաթիլային ճանապարհով, սննդամթերքից, ջրից, գյուղկենդանիների, կրծողների և միջատների միջոցով:

Էպիզոտիկ և էպիֆոտոտիկ հիվանդություններ կարող են առաջանալ մարզի ցանկացած տարածքում՝ կանխարգելիչ միջոցառումների բացակայության կամ սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում:

Էպիզոտիկ հիվանդությունների հարուցիչները կարող են տարածվել վարակակիր կենդանիներից, հողից, օդից և թերմշակված կենդանական սննդամթերքից:

Էպիֆտոտիկ հիվանդությունների տարածման պատճառ կարող են հանդիսանալ ներմուծվող սերմնանյութը, թերմշակված բուսաբուծական մթերքները, տնկանյութը և այլն:

Մարզի անտառապատ տարածքներում և տորֆային հանքերում հնարավոր են խոշոր հրդեհներ:

Հ/հ	Հրդեհի հնարավոր վայր	Պատկանելիություն	Մակերես /հա/
1	Սևանա լճի ավազան	«Սևան» ազգային պարկ	21,411
2	Ճամբարակի տարածաշրջան	«Հայանտառ» ՊՈԱԿ	9022
3	Վարդենիսի տորֆահանք	գ. Տորֆավան	60

Մարզի տարածքում բնակլիմայական ու տարերային վտանգավոր երևույթներից առավել բնորոշ են՝

- երկրաշարժերը,

Մարզի ողջ տարածքը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է նրա ազդեցությանը,

- սողանքները,

Մարզի սողանքավտանգ տարածքներն են՝

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Սողանքի տարածքը /հա/	Սողանքների տարածքում բնակելի տների քանակը	Առավել վտանգավոր տների քանակը	Տների զբաղեցրած տարածքը /հա/
1	ք. Ճամբարակ	1,54	6	-	0,4
2	գ. Ձորավանք	7	20	16	4,2
3	գ. Դպրաբակ	20	73	40	14
4	գ. Մարտունի	25	98	92	25,6
5	գ. Այգուտ	14	150	20	4,5
6	գ. Կալավան	1,5	17	9	0,7
7	գ. Երանոս	7	20	7	0,4
8	գ. Թթուջուր	2,5	10	3	0,3
9	գ. Ավազան	6	8	2	0,2

- հեղեղումները՝

Մարզում առկա է 5 ջրամբար՝ «Գեղարքունիք 1», «Լանջաղբյուր 1», «Գեղարքունիք 2», «Լանջաղբյուր 2» և «Ղազիգյոլ», որոնցից՝ արհեստական պատվարով են 2-ը՝ «Գեղարքունիք 2» և «Լանջաղբյուր 2»:

«Գեղարքունիք 2» ջրամբարի արհեստական պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Լանջաղբյուր, Սարուխան, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Նորատուս համայնքների և Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի գետամերձ տարածքները, ջրածածկման գոտում կհայտնվի մոտ 8267 մարդ և «Լանջաղբյուր 2» ջրամբարի արհեստական պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Լանջաղբյուր, Սարուխան, Կարմիրգյուղ, Գեղարքունիք, Նորատուս համայնքների գետամերձ տարածքները, ջրածածկման գոտում կհայտնվի մոտ 7247 մարդ:

Նշված 2 ջրամբարի արհեստական պատվարների փլուզման դեպքում կջրածածկվի մոտ 980հա հողատարածք և ջրածածկման գոտում կհայտնվի մոտ 4800 գլուխ խոշոր ու 3500 գլուխ մանր եղջերավոր անասուն:

«Գեղարքունիք 1», «Լանջաղբյուր 1» և «Ղազիգյոլ» ջրամբարների պատվարների փլուզման դեպքում Մարզի բնակչությանը վտանգ չի սպառնում:

Հեղեղումները հիմնականում առաջանում են գարնանային ձնհալի ժամանակ՝ ապրիլ-հունիս ամիսներին և ընդգրկում են ինչպես մարզի խոշոր գետերի, այնպես էլ սելավատարերի հարակից տարածքները, այսպիսով՝ ընդգրկելով մարզի գրեթե ողջ տարածքը: Հեղեղումներ են հնարավոր նաև ամառվա ընթացքում տեղացած ուժեղ անձրևների, կարկուտների հետևանքով:

Ձենքի տեսակների կիրառման առավել հավանական թիրախ են հանդիսանում սահմանամերձ 10կմ գոտում գտնվող 29 բնակավայրերը: Հակառակորդի դիվերսիոն գործողությունների թիրախ կարող են դառնալ խմելու ջրի 41 ջրամբարները: Ռմբակոծության հետևանքով կարող են վնասվել Սևան-Շորժա-Վարդենիս ավտոճանապարհի մոտ 0,5կմ հատված, Սևան-Շորժա-Վարդենիս երկաթուղու մոտ 2կմ հատված, ինչպես նաև՝ մայրուղային ճանապարհների 10 կամուրջ:

Ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում մարզի սահմանամերձ 29 բնակավայրերից կատարվում է մասնակի տարահանում, իսկ աղետալի ջրածածկման և սողանքային երևույթների ակտիվացման, կամ դրանց անմիջական սպառնալիքի դեպքում 15 բնակավայրերի վտանգավոր տարածքներից կատարվում է մասնակի կամ լրիվ տարահանում: Սահմանամերձ 29 բնակավայրերից ընդամենը տարահանվում է 7992 մարդ, որոնք 400 միավոր տրանսպորտային միջոցներով տեղափոխվում և տեղաբաշխվում են մարզի 12 համայնքներում: Սողանքավտանգ գոտիներից տարահանվում է 1450 մարդ, որոնք 72 միավոր տրանսպորտային միջոցներով տեղափոխվում և տեղաբաշխվում են Ճամբարակ և Սևան համայնքներում: Աղետալի ջրածածկման գոտիներից 8267 մարդ հետիոտն տեղափոխվում և տեղաբաշխվում է նույն համայնքի անվտանգ տարածքներում:

2. Մարզի տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում առկա են 30 հացի գործարաններ, որոնք մեկ օրում կարող են արտադրել 18,6տ հաց, սննդի մատակարարման 22 օբյեկտներ, որոնք մեկ ժամում կարող են սպասարկել 544 մարդու, 582 առևտրի կետեր, որոնք մեկ ժամում կարող են սպասարկել 4427 մարդու:

3. Մարզում առկա է կենսաապահովման համակարգի գործող 634 օբյեկտ, որից՝ 30 հացի գործարան, 22 սննդի մատակարարման օբյեկտ, 582 առևտրի կետ:
4. Մարզում պահուստային ռեսուրսներ ներգրավելու նպատակով՝ համապատասխան հայտեր են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարություն:
5. ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են մարզային ենթակայության 38 առողջապահական հիմնարկներ՝ երեք բժշկական կենտրոն՝ «Գավառի ԲԿ», «Սևանի ԲԿ», «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ներ, մեկ հիվանդանոց՝ «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, մեկ առողջության կենտրոն՝ «Ճամբարակի ԱԿ», մեկ ծննդատուն՝ «Մարտունու ծննդատուն» ՓԲԸ-ն, երկու պոլիկլինիկա՝ «Գավառի պոլիկլինիկա» և «Վարդենիսի պոլիկլինիկա» ՓԲԸ-ներ, 30 ՊՈԱԿ-ներ՝ 12 բժշկական ամբուլատորիաներ և 18 առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Առողջապահական հիմնարկների կազմում գործում են նաև 54 բուժակ մանկաբարձական կետեր /ԲՄԿ/:
Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 325 մարդ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 751 մարդ: Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 344 հատ, որից՝ վերակենդանացման բաժանմունքի մահճակալների թիվը՝ 27: Մարզի բուժհիմնարկները լրացուցիչ կարող են ծավալել 260 մահճակալ: Մարզի բուժհիմնարկների բազայի վրա ստեղծված են թվով 31 բժշկական կազմավորումներ՝ 90 մարդ անձնակազմով:
Տարահանման ժամանակ յուրաքանչյուր ավտոշարասյան մեջ նախատեսվում է 2 բժշկական բրիգադ՝ 2 գծային շտապօգնության ավտոմեքենայով:

III. Տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների իրականացման և ապահովման կարգը

1. **Տեղեկատվական ապահովումը** Մարզում արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվական ապահովումն իրականացվում է Վարչության և այլ կառավարման մարմինների կողմից տեղեկատվության հավաքագրման, պահպանման, թարմացման և յուրաժամանակ փոխանցման, ինչպես նաև բնակչությանն արտակարգ իրավիճակների ծագման հավանականության (փաստի), դրա հնարավոր հետևանքների, աղետի գոտում, երթուղիներում և տարահանման տարածքներում վարքի կանոնների մասին տեղեկացմամբ: Այդ նպատակով օգտագործվում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորություններն ու մարզի լրատվամիջոցները:

Մարզում արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվական ապահովման իրականացման համար պատասխանատու մարմին է հանդիսանում Վարչությունը:

2. **Կացարաններով ապահովումը** տուժած բնակչության և բնակչության կենսաապահովման ուժերին կացարաններով ապահովման համար աղետի գոտում պահպանված բնակելի տարածքների օգտագործումն է, ինչպես նաև տեղաբաշխման

տարածքներում ժամանակավոր կացարանների փոխադրումն է, ծավալումը և կառուցումը:

Մարզի տարահանված բնակչության և բնակչության կենսաապահովման ուժերի համար Ժամանակավոր կացարաններ կարող են ծառայել նաև ընդունող համայնքների հյուրանոցները, բնակելի տները, հանրակացարանները, մանկապարտեզները, անկախ սեփականության ձևից:

Կացարաններով ապահովման համար պատասխանատուներ են հանդիսանում ընդունող համայնքների ղեկավարները, որոնք տարահանման հանձնաժողովի ներկայացրած հայտերի հիման վրա կազմակերպում են կացարաններով ապահովման աշխատանքները:

3. **Կենցաղ-տնտեսական ապահովումը** տուժած բնակչության և բնակչության կենսաապահովման ուժերին ջեռուցման, լուսավորման, տարածքների սանիտարական մաքրման, բաղնիքալվացքարանային, հուղարկավորության ծառայություններով ապահովումն է, որը մարզի տարածքում կազմակերպվում է՝

- Կոմունալ-տեխնիկական ծառայության միջոցով, որը տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին ապահովում է ջեռուցման, տարածքների սանիտարական մաքրման և բաղնիքալվացքային ծառայություններով,
- Էներգետիկայի ծառայության միջոցով, որը տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերի տեղակայման վայրերում լուծում է լուսավորման խնդիրներ,
- Հատուկ սպասարկումների ծառայության միջոցով, որը կատարում է մահացածների հաշվառման, հուղարկավորության և այլ աշխատանքներ:

Կոմունալ տեխնիկական, Էներգետիկայի և հատուկ սպասարկումների ծառայությունները կենսաապահովման գործընթացի միջոցառումների իրականացման ժամանակ օգտագործում են սեփական, ինչպես նաև համայնքների և կազմակերպությունների ուժերն ու միջոցները: Ծառայությունների ապահովումը կատարվում է տարահանման հանձնաժողովի ներկայացրած հայտերի հիման վրա:

4. **Ջրամատակարարումը** բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին ջրով ապահովման համար ջրի արդյունահանում, մաքրում և վարակազերծում, պահպանում, պաշարների լրացում, տեղափոխումն ու բաշխումն է, որը կազմակերպում է մարզի կոմունալ-տեխնիկական ծառայությունը:

Մարզի տարածքներից տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում ջրամատակարարումը իրականացվում է ջրամատակարարման ստացիոնար համակարգերով, ջրհորների, արտեզյան հորատանցքերի, ջրի մատակարարման տրանսպորտային միջոցներով:

Մարզի տրանսպորտային ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի ջրատարեր և բեռնատար ավտոմեքենաներ՝ կոմունալ-տեխնիկական ծառայության ներկայացրած հայտերի հիման վրա:

5. **Բժշկական և սանիտարական ապահովումը** միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ

հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի օբյեկտների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

Մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովման համար պատասխանատու է մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայությունը: Մարզում բժշկական ապահովումը իրականացվում է առկա (անկախ կազմակերպաիրավական ձևից) առողջապահական հիմնարկների ուժերով և միջոցներով: Բժշկական ապահովման միջոցառումների իրականացմանը հնարավոր է նաև առողջապահական և այլ ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են մարզային ենթակայության 38 առողջապահական հիմնարկներ՝ երեք բժշկական կենտրոն՝ «Գավառի ԲԿ», «Սևանի ԲԿ», «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ներ, մեկ հիվանդանոց՝ «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, մեկ առողջության կենտրոն՝ «Ճամբարակի ԱԿ», մեկ ծննդատուն՝ «Մարտունու ծննդատուն» ՓԲԸ-ն, երկու պոլիկլինիկա՝ «Գավառի պոլիկլինիկա» և «Վարդենիսի պոլիկլինիկա» ՓԲԸ-ներ, 30 ՊՈԱԿ-ներ՝ 12 բժշկական ամբուլատորիաներ և 18 առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Առողջապահական հիմնարկների կազմում գործում են նաև 54 բուժակ մանկաբարձական կետեր /ԲՄԿ/:

Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 325 մարդ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 751 մարդ: Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 344 հատ, որից՝ վերակենդանացման բաժանմունքի մահճակալների թիվը՝ 27: Մարզի բուժհիմնարկները լրացուցիչ կարող են ծավալել 260 մահճակալ: Մարզի բուժհիմնարկների բազայի վրա ստեղծված են թվով 31 բժշկական կազմավորումներ՝ 90 մարդ անձնակազմով:

Տարահանման ժամանակ յուրաքանչյուր ավտոշարասյան մեջ նախատեսվում է 2 բժշկական բրիգադ՝ 2 գծային շտապօգնության ավտոմեքենայով:Մարզի տարահանման և տեղաբաշխման վայրերում բնակչության սանիտարական ու հատուկ մշակումը կազմակերպում և իրականացնում են մարզի հիգիենիկ հակահամաճարակային համակարգի կազմակերպությունները:

6. **Սննդի և նյութատեխնիկական ապահովումը** միջոցառումների համակարգ է՝ ուղղված տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերի համար անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցների և սննդամթերքի արտադրմանը, պահպանմանը, տեղափոխմանը, ինչպես նաև ժամանակին ու անխափան մատակարարմանը:

Սննդի և նյութատեխնիկական ապահովման համար պատասխանատու են մարզային քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունները:

Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

Կենսաապահովման համակարգի ուժերը ապահովվում են տեխնիկայով, վառելիքաքսուքային նյութերով, ջրով, սննդամթերքով, անհատական պաշտպանության և կապի միջոցներով, շինարարական և այլ տեսակի նյութական ու տեխնիկական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով:

Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

Տարահանման հանձնաժողովից ստանալով համապատասխան տվյալներ տարահանվող և տեղաբաշխվող բնակչության վերաբերյալ, նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը ստեղծում է թվով 15 բնակչության ժամանակավոր կացարաններին կից շարժական բաշխման կետ: Պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները ստանալով՝ նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունները կազմակերպում են նյութական միջոցների կուտակումը, տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան շարժական կետերում:

Նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունները կազմակերպում են առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի առևտուրը՝ Մարզում առկա առևտրային ցանցի և շարժական առևտրային կետերի միջոցով:

Տրանսպորտային ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային ավտոտրանսպորտ և ավտոբենզատարեր՝ նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունների ներկայացրած հայտերի հիման վրա:

Նյութական միջոցների պահպանությունն իրականացվում է հասարակական կարգի պահպանության ծառայության ուժերով:

7. **Կրթության ապահովումը** կազմակերպում է մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչությունը՝ տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերի դպրոցների միջոցով:

Տուժած բնակչության կրթության կազմակերպման համար օգտագործվում են դպրոցների շենքերը, ինչպես նաև մշակույթի կենտրոնների շենքերը և ծավալվող վրանային ճամբարները:

Մարզի նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակության վրաններ՝ մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության ներկայացրած հայտերի հիման վրա:

8. **Սոցիալական ապահովումը** տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում տուժած բնակչության համար կազմակերպում է տվյալ տարածաշրջանը սպասարկող սոցիալական ծառայության կենտրոնը՝ տարահանման հանձնաժողովի տրամադրած հայտերի հիման վրա:

9. **Զբաղվածության ապահովումը** տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում տուժած բնակչության համար կազմակերպում է տվյալ տարածաշրջանը սպասարկող զբաղվածության և աշխատանքի կենտրոնը՝ տարահանման հանձնաժողովի տրամադրած հայտերի հիման վրա:

10. **Տրանսպորտային ապահովումը** վտանգավոր (աղետի) գոտուց տուժած բնակչության տարահանման (տեղափոխման), ինչպես նաև կենսաապահովման բոլոր տեսակների նյութական ռեսուրսների մատակարարման խնդիրների լուծման համար միջոցառումների իրականացումն է, որը կազմակերպում է մարզի տրանսպորտային ծառայությունը.

1) կազմակերպում է Մարզի տարածքի ճանապարհների ստեղծված իրավիճակի հետախուզումը, անցանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչի համար ստեղծվում է 2 երթուղային անցողունակության ապահովման խումբ.

2) հաշվառում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝

ա. վտանգավոր տարածքներից բնակչության և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար.

բ. բնակչության կենսաապահովման համակարգի ուժերի տեղափոխման համար.

գ. տուժածների փոխադրման համար.

դ. տրանսպորտային միջոցները չբավարարող ծառայություններին և կազմակերպություններին՝ իրենց առջև դրված խնդիրների կատարման տրանսպորտային ապահովման համար:

Տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է մարզպետի որոշմամբ՝ համաձայն ներկայացված հայտերի:

Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են՝ մարզի տարածքում գործող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման ու այլ կազմակերպությունների, քաղաքների և գյուղական համայնքների, ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտը և դրանց շահագործողները (վարորդներ, մեխանիզատորներ):

Կենսաապահովման միջոցառումներում ընդգրկված տրանսպորտային միջոցների սպասարկման համար ստեղծվում են շարժական ավտոլցավորման 3 խումբ, տրանսպորտային տարահանման 3 խումբ:

IV. Մարդասիրական օգնության ստացում և բաշխում

Հումանիտար օգնության ստացումը և ըստ տուժած բնակչության տեղամասերի հատկացումները կազմակերպում է մարզպետարանը:

Ստացված հումանիտար օգնությունը պահեստավորվում է տարահանված բնակչության տեղաբաշխման համայնքներում և բաշխվում է համապատասխան համայնքապետարանների կողմից:

V. Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում փոխգործողությունների կազմակերպման կարգը

Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, բնակչության կենսաապահովման համակարգի ուժերի միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

VI. Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում կառավարման կազմակերպումը և համակարգումը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետը ղեկավարում է տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը:

Մարզի, համայնքների և կազմակերպությունների ղեկավարները կառավարում են իրենց ոլորտի բնակչության կենսաապահովման գործընթացը: Կառավարումն իրականացնում են հիմնական կամ պահեստային կառավարման կենտրոններից (կետերից), իսկ անհրաժեշտության դեպքում՝ շարժական կենտրոններից (կետերից):

Կապը կազմակերպվում է մարզի կապի ծառայության, մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնի, ինչպես նաև այլ ծառայությունների ուժերով և միջոցներով:
Մարզի, համայնքների և կազմակերպությունների ղեկավարները իրենց իրավասության սահմաններում՝

1) պատասխանատվություն են կրում բնակչության կենսաապահովման պատրաստականության համար.
2) կազմակերպում և ղեկավարում են բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացումը.
3) հաստատում և գործողության մեջ են դնում տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանները.
4) արձակում են բնակչության կենսաապահովման միջոցառումներին վերաբերվող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.
5) վերահսկում են բնակչության կենսաապահովման միջոցառումների կատարումը.
6) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Մարզում և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացումը ապահովում են քաղաքացիական պաշտպանության ծառայությունները:

Համայնքներում և կազմակերպություններում բնակչության կենսաապահովման միջոցառումները իրականացնում են բնակչության կենսաապահովման համակարգի ուժերը:

Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման հարցերով մարզի պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը համակարգում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը:

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի
N 480-Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզի բնութագիրը բնակչության տեսանկյունից՝ ըստ համայնքների

Հ/հ	Համայնքներ, բնակավայրեր	Ընդհանուր	տղամարդիկ	կանայք	մինչև 1 տ	1-ից 4 տ	5-ից 9 տ	10-ից 14 տ	15-ից 19 տ	20-ից 45 տ (աշխատունակ բնակչություն	45-ից 64 տ	65 տ և բարձր թոշակառուներ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	Գավառ	29064	14823	14241	290	1453	2033	1744	1744	9300	8719	3781
2	Բերդկունք	294	150	144	3	14	21	18	18	96	88	36
3	Կարմիրգյուղ	5951	3035	2916	60	297	417	357	357	1905	1785	773
4	Գանձակ	4361	2224	2137	44	218	305	262	262	1395	1308	567
5	Լանջաղբյուր	2410	1229	1181	24	120	169	145	145	772	723	312
6	Լճափ	1157	590	567	12	58	81	69	69	370	347	151
7	Նորատուս	6140	3131	3009	61	307	430	368	368	1965	1842	799
8	Սարուխան	7579	3865	3714	76	379	530	455	455	2425	2274	985
9	Ծաղկաշեն	542	276	266	5	27	38	33	33	176	163	67
10	Ծովազարդ	2181	1112	1069	22	109	153	131	131	699	654	282
11	Հայրավանք	793	404	389	8	40	56	48	48	256	238	99
12	Գեղարքունիք	1854	946	908	19	93	130	111	111	593	556	241
	ընդամենը	**62326**	**31785**	**30541**	**624**	**3115**	**4363**	**3741**	**3741**	**19952**	**18697**	**8093**
1	Սևան	26004	13262	12742	260	1300	1820	1560	1560	8321	7801	3382
2	Չկալովկա	525	268	257	52	26	37	31	31	168	157	23
3	Դդմաշեն	2461	1255	1206	25	123	172	148	148	788	738	319
4	Գեղամավան	1722	878	844	17	86	121	103	103	551	517	224

5	Լճաշեն	4075	2078	1997	41	204	285	244	244	1304	1222	531
6	Նորաշեն	444	226	218	4	22	31	27	27	142	133	58
7	Սեմյոնովկա	293	149	144	3	15	21	18	18	94	88	36
8	Ծաղկունք	1026	523	503	10	51	72	62	62	328	308	133
9	Ծովագյուղ	4143	2113	2030	41	207	290	249	249	1326	1243	538
10	Վարսեր	1691	862	829	17	85	118	101	101	541	507	221
11	Զովաբեր	1512	771	741	15	76	106	91	91	484	454	195
	ընդամենը	**43896**	**22385**	**21511**	**485**	**2195**	**3073**	**2634**	**2634**	**14047**	**13168**	**5660**
1	Մարտունի	13719	6997	6722	137	686	960	823	823	4390	4116	1784
2	Արծվանիստ	3105	1583	1522	31	155	217	186	186	994	931	405
3	Աստղաձոր	4236	2160	2076	42	212	297	254	254	1355	1270	552
4	Զորագյուղ	4729	2412	2317	47	236	331	284	284	1513	1419	615
5	Երանոս	5335	2721	2614	53	267	373	320	320	1707	1600	695
6	Գեղհովիտ	6337	3232	3105	63	317	444	380	380	2028	1901	824
7	Մադինա	1105	564	541	11	55	78	66	66	354	331	144
8	Ն. Գետաշեն	9149	4666	4483	91	457	640	549	549	2928	2745	1190
9	Ծակքար	2813	1435	1378	28	141	197	169	169	900	844	365
10	Ծովասար	2889	1473	1416	29	144	202	173	173	924	867	377
11	Ծովինար	4527	2309	2218	45	226	317	272	272	1449	1358	588
12	Վ. Գետաշեն	4457	2273	2184	45	223	312	267	267	1426	1337	580
13	Վարդաձոր	2776	1415	1361	28	139	194	167	167	888	833	360
14	Վաղաշեն	4072	2076	1996	41	204	285	244	244	1303	1222	529
15	Զոլաքար	6627	3379	3248	66	331	464	398	398	2121	1988	861
16	Վարդենիկ	8333	4249	4084	83	417	583	500	500	2667	2500	1083
17	Լիճք	5297	2701	2596	53	265	371	318	318	1695	1589	688
	ընդամենը	**89506**	**45645**	**43861**	**893**	**4475**	**6265**	**5370**	**5370**	**28642**	**26851**	**11640**
1	Ակունք	4087	2084	2003	41	204	286	245	245	1308	1226	532

2	Ախպրաձոր	348	177	171	4	17	24	21	21	111	104	46
3	Գեղաքար	148	75	73	2	8	10	9	9	48	44	18
4	Կարճաղբյուր	2337	1191	1146	23	117	164	140	140	748	701	304
5	Լճավան	570	290	280	6	28	40	34	34	182	171	75
6	Լուսակունք	1489	759	730	15	74	104	89	89	476	447	195
7	Մ. Մասրիկ	2689	1371	1318	27	134	188	161	161	860	807	351
8	Մաքենիս	457	233	224	5	23	32	27	27	146	137	60
9	Նորակերտ	856	436	420	9	43	60	51	51	274	257	111
10	Տորֆավան	479	244	235	5	24	34	29	29	153	144	61
11	Ծովակ	2728	1391	1337	27	136	191	164	164	873	818	355
12	Վաննան	378	192	186	4	19	26	23	23	122	113	48
13	Խաչաղբյուր	1230	627	603	12	62	86	74	74	394	369	159
	ընդամենը	**17796**	**9070**	**8726**	**180**	**889**	**1245**	**1067**	**1067**	**5695**	**5338**	**2315**
	Գեղամասար համայնք											
1	Գեղամասար	1106	564	542	11	55	77	66	66	354	332	145
2	Սոթք	1309	667	642	13	65	92	79	79	419	393	169
3	Ազատ	165	84	81	2	8	12	10	10	53	49	21
4	Ավազան	261	133	128	3	13	18	16	16	83	78	34
5	Արեգունի	360	183	177	4	18	25	22	22	115	108	46
6	Արփունք	484	246	238	5	24	34	29	29	155	145	63
7	Գեղամաբակ	129	65	64	2	7	9	8	8	41	39	15
8	Դարանակ	208	106	102	2	10	15	12	12	67	62	28
9	Կախակն	419	213	206	4	21	29	25	25	134	126	55
10	Կութ	193	98	95	2	10	14	12	12	63	58	22
11	Կուտական	229	116	113	2	11	16	14	14	73	69	30
12	Նորաբակ	285	145	140	3	14	20	17	17	91	85	38
13	Շատջրեք	473	241	232	5	24	33	28	28	151	142	62

14	Շատվան	503	256	247	5	25	35	30	30	161	151	66
15	Ջաղացաձոր	153	78	75	2	9	10	9	9	49	46	19
16	Տրետուք	251	128	123	3	13	18	15	15	81	75	31
17	Փ. Մասրիկ	745	379	366	7	37	52	44	44	238	223	100
18	Փամբակ	448	228	220	5	22	31	27	27	143	134	59
	ընդամենը	**7721**	**3930**	**3791**	**80**	**386**	**540**	**463**	**463**	**2471**	**2315**	**1003**
						Վարդենիս համայնք						
1	Վարդենիս	13771	7023	6748	138	688	964	826	826	4407	4131	1791
2	Այրք	351	179	172	4	18	25	21	21	112	105	45
3	Ն. Շորժա	72	38	34	1	4	5	5	5	23	22	7
4	Վ. Շորժա	99	50	49	1	5	7	6	6	32	30	12
	ընդամենը	**14293**	**7290**	**7003**	**144**	**715**	**1001**	**858**	**858**	**4574**	**4288**	**1855**
						Շողակաթ համայնք						
1	Շողակաթ	521	265	256	5	26	36	31	31	167	156	69
2	Արտանիշ	601	306	295	6	30	42	36	36	192	180	79
3	Աղբերք	292	149	143	3	15	20	17	17	93	88	39
4	Դրախտիկ	1006	513	493	10	50	70	60	60	322	302	132
5	Ջիլ	662	337	325	7	33	46	40	40	212	199	85
6	Ծափաթաղ	215	109	106	2	11	16	14	14	69	64	25
	ընդամենը	**3297**	**1679**	**1618**	**33**	**165**	**230**	**198**	**198**	**1055**	**989**	**429**
						Ճամբարակ համայնք						
1	Ճամբարակ	6868	3502	3366	69	343	480	412	412	2198	2060	894
2	Անտառամեջ	187	95	92	2	9	13	11	11	60	56	25
3	Այգուտ	824	420	404	8	41	58	49	49	264	247	108
4	Դպրաբակ	554	282	272	6	28	39	34	34	177	166	70
5	Ջորավանք	162	82	80	2	8	11	10	10	52	49	20

6	Գետիկ	442	225	217	4	22	31	27	27	141	133	57
7	Կալավան	175	89	86	2	9	12	10	10	56	53	23
8	Մարտունի	570	290	280	6	29	40	34	34	182	171	74
9	Թթուջուր	1021	520	501	10	51	71	61	61	327	306	134
10	Վահան	1108	565	543	11	55	78	67	67	354	332	144
	ընդամենը	**11911**	**6070**	**5841**	**120**	**595**	**833**	**715**	**715**	**3811**	**3573**	**1549**
